

Խոհարարի գլխարկ

Ուղղանկյունաձև կտրվածքով կարվածքների խմբին է պատկանում խոհարարի գլխարկը: Խոհարարական գլխարկի համար ընտրեք գոգնոցին համապատասխան գործվածք և սկսեք կարել:

Ստորև ներկայացնում ենք խոհարարական գլխարկի գծագրի կառուցումը ուղղանկյունաձև կտրվածքով.

Գլխարկի գծագրի կառուցում

N	Չափսերի անվանումները	Չափսերի կրճատ նշումը	Վերցրած չափսերը սմ-ով
1.	Գլխի շրջագիծը	գլ. 2	50 սմ
2.	Գլխարկի բարձրությունը	գլ. Բ.	18 սմ

Կառուցեք ABCD ուղղանկյունը: AB հատվածի երկարությունը հավասար է գլխի շրջագծի կեսին գումարած 3 սմ (փոթերի համար): Այսինքն՝

$$AB = \text{գլ}2 : 2 + 3 = 50 : 2 + 3 = 28 \text{ սմ:}$$

$$AB = 28 \text{ սմ:}$$

Հատվածի AC երկարությունը հավասար է գլխարկի բարձրությանը, այսինքն՝ $AC = \text{գլ}Բ = 18 \text{ սմ:}$ Այսպիսով՝

$$AB = 28 \text{ սմ:}$$

$$AC = 18 \text{ սմ:}$$

Նշեք գլխարկի կապիչների տեղը:


a-ն, b-ն կապիչներ են, որոնց լայնությունը 2 սմ, երկարությունը 20 սմ է:

Ստացեք գլխարկի ձևանը, տեղադրեք գործվածքի վրա, գծանշեք, կտրեք:


Գլխարկը կարեք ձեռքի կարերով՝ հետկարով, ծալակարով: Կարվածքի լայնությունը կարգավորեք՝ հետևանաձևում կարելով 2 գոտիանման կապիչներ:



Գլխարկի ձևան և 2 կապիչներ



Գլխարկի գործվածքի ձևվածք և 2 կապիչներ





Մոդելավորման տարրեր

Կարվածքի ձևի փոփոխությունը և նրա գեղարվեստական ձևավորումը կոչվում է մոդելավորում: Մոդելավորման գործընթացին մասնակցում են նկարիչ-մոդելավորողները, նախագծողները, ձևարարները, դերձակները:

Մոդելավորման գործընթացը հիմնական գծագրի վրա ձևափոխություններ անելն է: Հիմնական գծագրով կարելի է կարել ամենապարզից մինչև բարդ ձևերով գոգնոցներ, կիսագոգնոցներ, գրպան, գոտի:

Խոնավաջերմային մշակումներ

Կարվածքների և կարերի մշակման համար մեծ դեր ունեն խոնավաջերմային մշակումները: Գպրոցական արհեստանոցներում խոնավաջերմային մշակումները կատարվում են էլեկտրական արդուկի, ջրցանի և հատուկ արդուկի սեղանի օգնությամբ: Արդուկը օգտագործելուց առաջ անհրաժեշտ է ստուգել արդուկի և էլեկտրալարի սարքին լինելը: Արդուկելու ընթացքում անհրաժեշտ է կանգնել ռետինե գորգի վրա, իսկ արդուկելուց հետո արդուկը պետք է դնել մետաղյա տակդիրի վրա: Գործվածքը կամ կարվածքը խոնավաջերմային մշակումից հետո անհրաժեշտ է արդուկը չոր ձեռքերով անջատել էլեկտրական հոսանքից:

